ՄԱՅՐ ԱԹՈՌ

Յուլիսի 26-ին առաւօտեան 6½ ժամին Նորին Վեհափառութիւնը դուրս եկաւ Ս. Էջմիածնից տողերիս գրողի և Խարէն էֆէնդու ուղեկցութեամբ փոքրիկ ճանապարհորդութիւն կատարելու համար։ Ժամը 9-ն էր երբ Նորին Սրբութիւնը հասաւ Երևան, ուր առաջնորդարանում հանգստանալուց և ճաշելուց յետոյ ուղևորուեց Դարաչիչագ։ Մինչև քաղաքի ծայրը Նորին Վեհափառութեան ուղեկցեց առաջնորդական փոխանորդ բարձր. տէր Կարապետ վարդապետը Վաչեան և Պանջուլաղեան քահանաների հետ։

Դիշերուայ ժամը 10-ին Նորին Վեհափառութիւնը հասաւ Դարաչիչագ և իջևանեց Երևանցի Դէորգ աղա Դէորգեանի տանը, որը ամբողջապէս ծաղկազարդել էին տեղս ամարանոց եկող և բնիկ հայերը։ Հետևեալ օրը Նորին Վեհափառութիւնը երեկոյեան դէմ գնաց եկեղեցի, Երևանի պ. Նահանգապետի հետ այցելութիւններ փոխանակեց։ 28 և 29-ի գիշերները պատշգամբում խմբուած երկսեռ երիտասարդութիւնը երգում էր։

30-ին առաւօտեան ժամը 8-ին Նորին Վեհափառութիւնը ուղևորուեց Ռանդամալ հայաբնակ գիւղը, ուր հանգստանալուց յետոյ դիմեց Սևան։ Դարաչիչագից մինչև Սևան Նորին Վեհափառութեան ուղեկցում էր և Դէորգեան ընտանիքն՝ հետն ունենալով Վեհափառութեան համար հարկաւոր պատրաստութիւններ։ Նորին Վեհափառութիւնը Սևանում միայն մի գիշեր մնաց, հետևեալ օրը ամսի 31-ին ուղևորուեց Դիլիջան. ճանապարհին սկսուող և արդէն կամաց կամաց սաստկացող անձրևներից հարկադրուած՝ Նորին Վեհափառութիւնը որոշեց մնալ Սեմէոնովկա կայարանում, ուր հարկաւոր պատրաստութիւնները խոկոյն և եթ տեսնուեցան։ Դիլիջանից Սեմէոնովկա էր շտապել երեք հոգուց բաղկացած մի պատ-

գանաւորութիւն, որը և խնդրեց Վեհին շնորհ տանել և Դիլիջան։

Օգոստոսի 1-ին առաւօտեան ժամը 8-ին Նորին Վեհափառութիւնը դուրս եկաւ Սեմէոնովկայից և 11-ին հասաւ Դիլիջան, որտեղից արդէն շտապել էին դիմաւորողները։ Սևանից դուրս գալու միջոցին Նորին Վեհափառութիւնը Ս. Էջմիածնից ստացաւ մի հեռագիր, որով Ս. Ղևոնդ եպիսկոպոսը յայտնում էր Կայսերական Թագաժառանգ Ալէքսէյի ծննդեան մասին։ Դիլիջանից Նորին Վեհափառութիւնը Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսեր շնորհաւորական հեռագիր տուեց։

Վեհափառը Դիլիջանում իջել էր ինժեներ Եարալեանի տանը. այստեղ Նորին Վեհափառութեան ներկայացան տեղիս հասարակութեան առաջաւոր անդամները և շրջակայքից եկած քահանաները։

Դիշերը մնաց այստեղ. միւս օրն ամսի 2-ին Նորին Վեհափառութիւնը ուղևորուեց Ղարաքլիսա առաւօտեան 8 ժամին։ Վեհափառութեան մինչև 7 վերստ ուղեկցում էին քահանաներ և ուրիշներ։ Ղարաքլիսային 6—7 վերստ մնացած երևացին ընդառաջ եկողների կառքերը և ձիաւորների խմբեր, որոնք, քանի գնացքը մօտենում էր քաղաքին՝ աւելի և աւելի ստուարանում էին։ Մինչև 18 կառքեր էին դիմաւորել։ Ղարաքլիսայի ծայրը հաւաքուած ժողովուրդը, որը կազմուած էր ամարանոց եկողներից և բնիկներից, ցնծագին կեցցէներով ընդունեց Նորին Վեհափառութեան և աղ ու հաց մատոյց։

Վեհափառի համար պատրաստել էին եղբայրներ Եդիգարեանցների տունը։ Այստեղ Նորին Մեծութիւնից ստացաւ Նորին Վեհափառութիւնը իւր տուած հեռագրի պատասխանը ցերեկուայ ժամը 2-ին։ Ամսի 3-ին ժամը $7^1/_2$-ին Ղարաքլիսայի կայարանում հաւաքուած էր մեծ բազմութիւն, որ եկել էր Նորին Վեհափառութեան բարի երթ մաղթելու։ Ժամը 8-ին Թիֆլիզից եկած գնացքը կեցցէներով ճանապարհ ձգեց այդ բազմութիւնը դէպի Աղէքսանդրապոլ։ Ժամը $11^1/_2$-ին գնացքը հասաւ Աղէք-

սանդրապոլ. այստեղ վագոնում Նորին Վեհափառութեան ներկայացան Գեր. Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունին Գաւառապետի օգնականը և քաղաքագլուխ պ. Տ. Աստուածատրեանը և ուրիշները։ Դիմաւորելու համար հաւաքուած բազմութեան միջից անցնելով՝ Նորին Վեհափառութիւնը կառատրմի առաջնորդութեամբ և ուղեկցութեամբ դիմեց յաջորդարան։ Ղարաքլիսայից Նորին Վեհափառութեան ուղեկցում էր Սանահին վանքի վանահայր Գեր. Գարեգին եպիսկոպոս Սաթունեանը։ Համամլու կայարանում Նորին Վեհափառութեան դիմաւորեց Բարձր Տ. Կարապետ վարդապետը, որ իւր թեմն էր շրջագայում։ Սոքա երկուսն էլ ուղեկցեցին մինչև Աղէքսանդրապոլ։ Ամսի 5-ին Նորին Վեհափառութիւնը 12-ի գնացքով, որի հետ կար Նորին Վեհափառութեան համար պատրաստուած սալոն-վագոն, մեկնեց Ս. Էջմիածին, ուր հասաւ ժամը 7-ին։

Կարխուն կայարան էին եկել Նորին Ս. Օծութեան դիմաւորելու համար Գերապատիւ Ղեւոնդ եպիսկոպոսը, Բարձր. Տ. Մխիթար, Տ. Բաբգէն և Տ. Զաւէն վարդապետները։

Աղէքսանդրապոլում Նորին Ս. Օծութեան բարի երթ մաղթելու համար կայարան էին եկել Գաւառապետի օգնականը, քաղաքագլուխը և մեծ բազմութիւն. իսկ հոգևորականութիւնից Գեր. Յովհաննէս եպիսկոպոսը, Բարձր. Տ. Կարապետ և Տ. Արսէն վարդապետները։ Մինչև գընացքի դուրս գալը՝ բոլոր հարկաւոր կարգադրութիւնները՝ Նորին Վեհափառութեան յարմարութիւն տալու համար՝ գաւառապետը անձամբ էր անում։ Գեր. Սարգիս եպիսկոպոս Փիլոյեանը, որ Սևանայ վանքից միացել էր շքախմբին, Նորին Վեհափառութեան ուղեկցեց մինչև Ս. Էջմիածին։

Լեւոն աբեղայ.